ԿԵՆՏՐՈՆԱՁԻԳ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԱՐԵՎՈՐ ԳՈՐԾՈՆ

DOI: 10.52174/2579-2989_2021_4_31

Հիմնաբառեր. *տարածքային զարգացում, կենտրոնաձիգ բնակավայրեր, «աճի բևեռներ», ուրբանիզացում, բնակչություն, զբաղվածություն, ենթակառուցվածքներ*

Սամվել ԱՎԵՏԻՍՅԱՆ

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

1978 թ. գերազանցությամբ ավարտել է ՀԳԻ տնտեսագիտական ֆակուլտետը, աշխատել արտադրությունում և սովորել ասպիրանտուրայում: 1990 թ. ստացել է տնտեսագիտության թեկնածուի, 2003 թ.՝ դոկտորի գիտական աստիճան, 2007 թ.՝ պրոֆեսորի գիտական կոչում: 1999 թ. ընտրվել է ՀՀ ԱԺ պատգամավոր: 2002-2011 թթ. աշխատել է ՀՀ գյուղատնտեսության նախարարի առաջին տեղակալ: 2013 թ.-ից աշխատում է ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնում, նախ՝ զբաղեցնելով տնօրենի և սոցիալ-տնտեսական ծրագրերի համակարգողի, ապա 2016 թ.-ից՝ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի «Ազգային մրցունակության և միջազգայնացման հետազոտություններ» ծրագրի տնօրենի պաշտոնները: Ներկայում նույն կենտրոնի ավագ փորձագետ է:

Հեղինակ է շուրջ 140 գիտական հոդվածների, 16 մենագրությունների և ուսումնական ձեռնարկների:

Տարածքային համաչափ զարգացումը բազմագործոն ու դժվարին գործընթաց է, որտեղ բացարձակ համաչափության հավակնելն ամենևին էլ իրատեսական չէ, քանի որ աշխարհագրական, բնական, տնտեսական, սոցիալական ու մարդկային գործոնները որոշակիորեն տարբեր են և դրանով իսկ ազդում են զարգացման էության ու ընթացքի վրա:

Նշված գործոնների ազդեցությունն առավել ակնհայտ է դառնում այնպիսի լեռնային երկրում, ինչպիսին Հայաստանն է: Ի դեպ, երկրի տարածքի փոքրությունն այնքան էլ չի մեղմացնում այդ գործոնների ազդեցությունը, քանի որ անգամ հարևանությամբ գտնվող բնակավայրերում երբեմն նկատելի են սովորությունների, քաղաքակրթության, կենցաղավարության, խոսքի առոգանության ու բարբառային տարբերություններ: Իսկ նշված հատկանիշների համախումբը ձևավորում է որոշակի ինքնատիպություն՝ առանձնահատուկ բովանդակություն հաղորդելով մարդկանց զբաղմունքին, աշխատանքին ու կենցաղին:

Միաժամանակ, դժվար չէ նկատել, որ համեմատաբար բարեկեցիկ ու բարեկարգ, տեխնիկական ու կազմակերպական առումով՝ ժամանակակից արտադրական ձեռնարկություններով, մշակութային ու սոցիալական օբյեկտներով հագեցած քաղաքային, իսկ որոշ դեպքերում նաև խոշոր գյուղական բնակավայրերի առկայությունը զգալիորեն փոխում է յուրաքանչյուր տարածաշրջանի «դեմքը»՝ նպաստելով վերջինիս զարգացման մակարդակի բարձրացմանը: Այդպիսի ներուժ ունեցող բնակավայրերը մասնագիտական գրականության մեջ, որպես կանոն, կոչվում են «աճի բևեռներ»: Վերջիններիս առավել բնորոշ է տնտեսական ներուժի զարգացումը: Մինչդեռ

տարածքային համաչափ զարգացման տեսանկյունից, նմանատիպ բնակավայրերի դեպքում առավել պատկերավոր ու բնութագրական կարող է լինել «կենտրոնաձիգ բնակավայրեր» եզրույթի կիրառումը՝ հաշվի առնելով, որ դրանց հատուկ է սոցիալ-տնտեսական, հատկապես զբաղվածության և մշակութային առումով շրջակա բնակչությանը ծառայությունների մատուցումը, որն առավել կառավարելի է դարձնում զբաղվածության, գյուղական բնակչության արտահոսքի և սոցիալ-մշակութային ոլորտներում համաչափ զարգացման հիմնախնդիրների լուծման գործընթացը:

«Կենտրոնաձիգ բնակավայրեր» եզրույթը բնորոշելիս ակամայից մտաբերում եմ Մինեապոլիսից դեպի Դե Մոյն թռչող փոքր ինքնաթիռի պատուհանից երևացող Մինեսոտա և Այովա նահանգների պատկերը: Համեմատաբար քիչ բնակեցված այդ գյուղատնտեսական նահանգների լայնարձակ տափաստաններում բազմաթիվ էին ֆերմերային տնտեսությունները՝ փոքր առանձնատներով, սիլոսի աշտարակներով, անասնաշենքերով ու ավտոտնակներով: Հիմնականում մսակաթնային տավարաբուծությամբ, եգիպտացորենի, սոյայի և առվույտի մշակությամբ զբաղվող այդ տնտեսությունները միմյանցից 15-20 կմ հեռավորության վրա էին և կապված էին իրար հետ բարեկարգ ճանապարհներով: Կենտրոնում դաստակերտն էր՝ եկեղեցու և ջրաբաշխ աշտարակի գմբեթով, բնակելի տներով, առևտրային, դպրոցի, հիվանդանոցի և այլ շինություններով: Հետագայում պարզ դարձավ, որ այդ բնակավայրերում կյանքը եռում է: Այստեղ էին դպրոց հաճախում ֆերմերների երեխաները: Դպրոցական ավտոբուսը, մեկ-մեկ տներից հավաքելով, նրանց դպրոց էր բերում, իսկ երեկոյան՝ հիմնական դասերն ավարտած և հաջորդ օրվա առաջադրանքները կատարած, տուն տանում: Յուրաքանչյուր կիրակի պատարագի, համատեղ ճաշի, գնումների ու որևէ մշակութային միջոցառման էր գալիս ֆերմերի ընտանիքը: Այսինքն՝ որոշակի շրջագծում տեղաբաշխված այդ բնակավայրը բազմագործոն դերակատարություն ուներ, և ֆերմերներն իրենց չէին զգում աշխարհից կտրված ու մոռացված: Հետագա ուսումնասիրություններն ու այցելությունները ցույց տվեցին, որ նման սխեմա գործում է նաև եվրոպական շատ պետություններում, մասնավորապես՝ Գերմանիայում, Ավստրիայում, Լեհաստանում, Մերձբալթյան և Սկանդինավյան երկրներում: Մինչդեռ բոլորովին այլ պատկեր էր Իտալիայի հարավում, Հունաստանում և Սլովենիայում: Այս երկրներում տիրապետող բարձունքի լանջին տեղակայված էին ոչ մեծ քաղաքատիպ ավաններ, որոնց շուրջ դաշտեր ու այգիներ էին: Այնպիսի տպավորություն էր, որ իսկապես վերացել է տարբերությունը գյուղի և քաղաքի միջև...

Ինչպես շատ կողմերով, տարածքային զարգացման և բնակչության տարաբնակեցման առումով նույնպես, առանձնահատուկ է Իսրայելը: Երկրի տարածքը 21640 քառ. կմ է (ՀՀ տարածքի 72,7%-ը), իսկ բնակչության խտությունը 1 քառ. կմ-ի հաշվով՝ 400 մարդ: 2021 թ. տվյալներով՝ քաղաքային բնակչության ընդհանուր թիվը կազմել է 8,049,648 կամ ընդհանուր բնակչության մոտ 93%-ը: Հետաքրքրական է, որ այստեղ, «գյուղական բնակչության» փոխարեն, ընդունված է կիրառել «քաղաքից դուրս բնակչություն» եզրույթը[1]: Իրականում էլ, իսրայելական կիբուցների և մաշավների կենտրոնական դաստակերտները հեռու են գյուղի մասին մեր պատկերացումներից: Օրինակ՝ Նազարեթից ընդամենը 7 կմ հեռավորության վրա գտնվող Կիբուց Միրզան այնպես էր նախագծված, որ մշակվող բոլոր հողերն ու արտադրական ենթակառուցվածքները, այդ թվում՝ բնակիչների ավտոմեքենաների կանգառի հրապարակը, տեղաբաշխված էին բնակավայրի եզրագծից անդին, իսկ կենտրոնում միայն ընդհանուր օգտագործման ճաշարանը, դպրոցը, մշակույթի կենտրոնը, բուժկետն ու դեղատունն էին: Իսրայելում, առանց չափազանցության, հողի և առավելապես՝ ջրի նկատմամբ պաշտամունք կա: Ուստի 9 մլն մարդկանցով բնակեցված փոքր տարածքի վրա մեծ առանձ-

[1] https://anyroad.ru/country/il

նատների, ավտոտնակների ու բակերի կառուցումը ծայրաստիճան անխոհեմություն ու շռայլություն են համարվում: Գրեթե նմանատիպ պատկեր է նաև Ճապոնիայում: 2020 թ տվյալներով՝ երկրի մոտ 126 մլն բնակչության 91.8%-ը բնակվում է քաղաքներում[2]: Այստեղ նույնպես գերազանցապես գյուղատնտեսության ոլորտում զբաղված բնակչության բնակատեղիները, մեր պատկերացմամբ, դժվար է գյուղ անվանել:

Հայաստանում դեռևս խորհրդային տարիներին ընդունված էր համեմատաբար ինքնաբավ բնակավայրերի ձևավորման քաղաքականությունը: Այսինքն՝ «յուրաքանչյուր տարածաշրջան կամ բնակավայր ուներ իր ուրույն դիմագիծը և տեղը երկրի զարգացման գործընթացում»[3]: Հատկապես անցյալ դարի 60-ական թվականներից սկսած՝ յուրաքանչյուր մեծ թե փոքր գյուղական բնակավայր պետք է ունենար միջնակարգ դպրոց, մանկապարտեզ, մշակույթի տուն, գրադարան, փոստ և սոցիալ-մշակութային այլ օբյեկտներ: Անգամ Երևանի բնակչության քանակի անհաշվենկատ ավելացումը, ինչպես նաև Արարատյան դաշտի և նախալեռնային գոտու մելիորացված ղռերի ու քարքարոտ հողերի վրա ստեղծված նոր բնակավայրերի բնակեցման նպատակով լեռնային գյուղերից բնակչության արտահոսքի ակտիվացումը չէին խանգարում յուրաքանչյուր փոքր գյուղի համար իրականացնել սոցիալական զարգացման ծրագրեր: Սակայն, ավերիչ երկրաշարժը, ծանր պատերազմական տարիները, ոչ ճիշտ մասնավորեցման գործընթացը և տնտեսական կապերի կորուստը բացասաբար անդրադարձան երկրի տնտեսության և, հատկապես, որոշ մարզերի տնտեսությունների վրա[4]:

Թեև ՀՀ կառավարության ֆինանսական համահարթեցման քաղաքականությունը կոչված է «նպաստելու համայնքների ներդաշնակ զարգացմանը, բոլոր համայնքներում նվազագույն մակարդակի ծախսեր կատարելու համար ՏԻՄ-երին օրենքով վերապահված սեփական լիազորությունների իրականացման ֆինանսական հնարավորությունների միջև առկա տարբերությունների նվազեցմանը»[5], այդուհանդերձ, համայնքային բյուջեի և դոտացիայի սուղ միջոցները հնարավորություն չեն ընձեռում ըստ արժանվույն լուծելու համայնքային խնդիրները: Իհարկե, այս տեսանկյունից, բնակավայրերի խոշորացումը որոշակիորեն նպաստում է ինստիտուցիոնալ առումով առաջնահերթ խնդիրների լուծմանը, սակայն նույնիսկ սուբվենցիոն ծրագրերի խթանման պայմաններում բազմաթիվ հիմնախնդիրներ մնում են չլուծված: Մասնավորապես՝ դեռևս առկախ է մնում հետևյալ հարցը՝ ինչպե՞ս, ի՞նչ միջոցներով ապահովել ՀՀ տարածաշրջանային համաչափ զարգացում: Մեր կարծիքով՝ «գյուղական տարածքների համաչափ զարգացում» գաղափարն այնքան էլ իրատեսական չէ, և այդ ուղղությամբ իրականացվող քաղաքականությունը բացարձակ վերջնարդյունք չի կարող ապահովել: Ուստի անհրաժեշտ է առաջադրել ավելի առարկայական, համեստ ու հասանելի գաղափար: Ահավասիկ, «աճի բևեռների» կամ «կենտրոնաձիգ բնակավայրերի» ձևավորման տեսլականն ավելի առարկայական է և կարող է ազդեցության գոտիների շրջանակներում առավել նպատակային ու խնայողական սկզբունքով ապահովել գյուղական բնակավայրերի սոցիալ-տնտեսական համահարթեցումը:

Այս տրամաբանությունն ակնհայտ է ՀՀ կառավարության 2017 թ. դեկտեմբերի 21-ի նիստի N53 արձանագրային որոշմամբ ընդունված՝ «Տարածքային աճի բևեռների հայեցակարգում» և ՀՀ կառավարության 2018 թ. բյուջետային ուղերձում: Մասնավորապես՝ վերջին փաստաթղթում նշվում է, որ տեղական ինքնակառավարման համակարգի տարածքային, տնտեսական, ֆինանսական և քաղաքական դերի բարձրացման շրջանակներում նախատեսվում է իրականացնել երկրոր-

[2] https://knoema.ru/atlas/%D0%AF%D0%BF%D0%BE%D0%BD%D0%B8%D1%8F/%D0%94%D0%BE%D0%BB%D1%8F-%D0%B3%D0%BE%D1%80%D0%BE%D0%B4%D1%81%D0%BA%D0%BE%D0%B3%D0%BE-%D0%BD%D0%B0%D1%81%D0%B-B%D0%B5%D0%BD%D0%B8%D1%8F

[3] Հայեցակարգ տարածքային աճի բևեռների զարգացման, http://www.irtek.am/views/act.aspx?aid=93189

[4] Նույն տեղում:

[5] «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենք, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=118597

դային քաղաքների զարգացման ծրագրեր, մասնավորապես՝ ՀՀ չորս քաղաքային համայնքներում (Գյումրի, Վանաձոր, Դիլիջան և Ջերմուկ) ծրագրերի իրականացման համար վարկային միջոցների ներգրավման բանակցություններ[6]:

Ի դեպ, դիտարկվում էր այս ցանկում ներառել նաև 5 քաղաքային համայնքներ (Եղեգնաձոր, Աշտարակ, Սևան, Ստեփանավան, Ծաղկաձոր)՝ դրանց համար մշակելով զարգացման ծրագրեր[7]:

Հոդվածում փորձել ենք ըստ ՀՀ մարզերի առանձնացնել այն բնակավայրերը, որոնք կարող են կենտրոնաձիգ դերակատարություն ունենալ որոշակի տարածաշրջանի զարգացման համար:

Արագածոտնի մարզ: Հանրապետության ամենագյուղաբնակ մարզն է՝ 2020 թ. տվյալներով գյուղական բնակչությունը 78.5% է: Մարզկենտրոն Աշտարակը, նախկին շրջկենտրոններ Թալինն ու Ապարանն ավանդաբար պահպանում են իրենց կենտրոնաձիգ դերը, քանի որ արտադրական և սոցիալական ենթակառուցվածքների գործունեությունը համախմբող նշանակություն ունի շրջակա բնակավայրերի համար: Այսպես՝ Աշտարակում գործում են միջնակարգ, երաժշտական և մարզական դպրոցներ, մանկապարտեզներ, մշակույթի տուն, գրադարաններ, մարզադաշտ, հիվանդանոց, պոլիկլինիկա, կապի հանգույց, «Միկրոմ» ձեռնարկությունը, պոլիէթիլենային տարաների և պոլիգրաֆիական գործարանները, ինչպես նաև զարգացած է սննդի արդյունաբերությունը[8]: Այստեղ է գտնվում ՀՀ ԳԱ ռադիոֆիզիկայի և ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտը: Ապարանը խոշորացված համայնք է՝ 21 բնակավայրով: Քաղաքում կան մի շարք ձեռնարկություններ, այդ թվում՝ կաթնամթերքի վերամշակման և պանրի արտադրության գործարան: Այստեղ հատկապես զարգացած է մանրածախ առևտուրը:

Թալինն ունի 2 միջնակարգ և երաժշտական դպրոց, մանկապարտեզներ, մշակույթի տուն, գրադարաններ, հիվանդանոց, պոլիկլինիկա, կապի հանգույց, երկրագիտական թանգարան, բնական ադամանդի մշակությամբ զբաղվող ձեռնարկություն և պանրի գործարան:

Արագածի տարածաշրջանի կենտրոնաձիգ հատկությամբ առանձնանալու հավակնություն ունեցող նախկին շրջկենտրոն Ծաղկահովտի և խոշոր բնակավայր Հնաբերդի ենթակառուցվածքները փոքր են, և տարածքային զարգացման առումով՝ ազդեցությունը թույլ է: Ուստի, անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել այս բնակավայրերի զարգացմանը:

Արարատի մարզ: Հանրապետության համեմատաբար համաչափ զարգացած մարզն է, որի հարթավայրային մասում գտնվում են գրեթե բոլոր բնակավայրերը: Մարզի հարթավայրային մասի տարաբնակեցման կարևոր առանձնահատկությունն այն է, որ գյուղական բնակավայրերի խտությունը մեծ է, տարաբնակեցումը՝ համատարած, այսինքն՝ հաճախ չի նկատվում, թե որտեղ է վերջանում մի բնակավայրը և սկսվում մյուսը: Նույնը չի կարելի ասել Ուրցաձոր-Շաղափ-Լուսաշող-Լանջառ-Ուրցալանջ հատվածի բնակավայրերի մասին, որտեղ կենտրոնաձիգ գործառույթ իրականացնող հիմնական բնակավայրը Վեդի քաղաքն է: Ուստի թե՛ տարածական զարգացման, թե՛ ռազմավարական շահերը պահանջում են բարելավել այդ գյուղերով անցնող ճանապարհը և օգտագործել ագրոզբոսաշրջության զարգացման հնարավորությունները:

Արմավիրի մարզ: Բնակչության թվով և խտությամբ ՀՀ մարզերի շարքում գրավում է առաջին տեղը: Այդուհանդերձ, չնայած ռելիեֆային պայմանների միատարրությանը, բնակչության տեղաբաշխումն այստեղ հավասարաչափ չէ: Ամենամեծ կուտակումն արևելյան հատվածում է: Դեպի արևմուտք շարժվելիս այն կտրուկ նվազում է: Մարզի արևելյան մասի տարաբնակեցման կարևոր առանձնահատկությունն այն է, որ գյուղական բնակավայրերի խտությունը մեծ է, տարաբնակեցումը՝ համատարած:

Մարզի տարածական զարգացման համար կարևոր դերակատարում ունեն երկ-

[6] Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի բյուջետային ուղերձ, Եր., 2017:
[7] Նույն տեղում:
[8] http://aragatsotn.mtad.am/about-communities/801/

րի երկաթուղային գլխավոր մայրուղին և Երևան-Վաղարշապատ-Արագած-Գյումրի ավտոճանապարհը: Կենտրոնաձիգ գործառույթ իրականացնելու զգալի ներուժով են օժտված Մյասնիկյան, Բաղրամյան և Արտենի բնակավայրերը:

Գեղարքունիքի մարզ: ՀՀ մարզերից տարածքով ամենամեծն է: Ավելին, ՀՀ Կոտայքի, Արմավիրի և Արարատի մարզերը միասին վերցրած, հավասար են Գեղարքունիքի մարզի տարածքին, իսկ Սևանա լիճը զբաղեցնում է դրա ¼-ը: Այս առանձնահատկություններն ազդել են տարածական զարգացման և տարաբնակեցման վրա: Նախ՝ բնակավայրերի տեղաբաշխումն անհամաչափ է և հարմարված լճի ափամերձ գոտու ռելիեֆային պայմաններին: Բնակավայրերի մեծ մասը տեղաբաշխված է Սևանի ավազանի արևելյան և հարավային հատվածներում: Մարզի 93 գյուղում բնակվում է բնակչության 70.7%-ը: Հատկապես հարավային հատվածի ափամերձ տարածքներում տեղաբաշխված են ՀՀ խոշոր գյուղերը, որոնց բնակչության թիվը 2020 թ. տվյալներով հետևյալն է. Ներքին Գետաշեն՝ 8989, Վարդենիկ՝ 8482, Սարուխան՝ 8285, Զոլաքար՝ 6868, Գեղհովիտ՝ 6169, Կարմիրգյուղ՝ 6096 մարդ: Կարելի է հավաստել, որ այս խոշոր գյուղերը նաև կենտրոնաձիգ գործառույթ են իրականացնում, քանի որ համեմատաբար բարեկարգ են՝ հագեցած ենթակառուցվածքների բավական զարգացած ցանցով: Նույնը դժվար է ասել Վարդենիսի և Ճամբարակի տարածաշրջանի բնակավայրերի մասին, որտեղ, ըստ էության, կենտրոնաձիգ բնակավայրի գործառույթ իրականացնում են միայն Վարդենիս և Ճամբարակ քաղաքները:

Լոռու մարզ: Ուրբանիզացման մակարդակով Լոռու մարզը (59,1%) երկրորդն է Սյունիքից հետո: Նախ՝ այստեղ է գտնվում բնակչության թվով (2020 թ. տվյալներով՝ 77234 մարդ) հանրապետության երրորդ քաղաքը՝ Վանաձորը[9]: Քաղաքի ենթակառուցվածքների ներուժը մեծ է և ուղղակի ազդեցություն է գործում մարզի բնակավայրերի սոցիալ-տնտեսական զարգացման վրա: Բավական է նշել, որ ՀՀ պետական ռեգիստրի տվյալներով՝ համայնքում գրանցված է 2851 ձեռնարկություն: Այստեղ գործունեություն են ծավալում 21 ֆինանսական, որոնցից 16-ը՝ բանկային մասնաճյուղ, 5 վարկային կազմակերպություններ: Միայն Վանաձորի «Գլորիա» կարի ֆաբրիկայում աշխատում է ավելի քան 2500, «Սարտոնում»՝ 564, «Ավտոգենում»՝ 402 մարդ և այլն: Ընդհանուր առմամբ, Վանաձորում գործում են 1751 միկրո-, 1047 փոքր, 29 միջին և 3 խոշոր ձեռնարկություններ: Վանաձորի տնտեսության առաջատար և զարգացման մեծ ներուժ ունեցող ոլորտներն են թեթև արդյունաբերությունը, զբոսաշրջությունը, մասնավորապես՝ առողջարանային և մանկապատանեկան հանգստի կազմակերպումը, բարձր տեխնոլոգիաների և հանրային ծառայությունների ոլորտները[10]:

Համեմատաբար մեծ քաղաքներ են նաև Սպիտակը (12690 մարդ), Ալավերդին (12543 մարդ), Ստեփանավանը (12343 մարդ) և Տաշիրը (7203 մարդ): Կենտրոնաձիգ գործառույթ են իրականացնում նաև մնացած երեք քաղաքները՝ Թումանյան, Ախթալա և Շամլուղ, թեև վերջիններիս բնակչության թիվը մեծ չէ: Լինելով հանքագործական կենտրոններ՝ այստեղ շրջակա բնակավայրերի բնակիչներն ապահովվում են աշխատատեղերով և համապատասխան սոցիալական ենթակառուցվածքներով: Ինչպես Գեղարքունիքի մարզում, այստեղ նույնպես առկա են խոշոր գյուղեր, մասնավորապես՝ Մեծավան՝ 5958, Գուգարք՝ 5665, Օձուն՝ 4880, Ջրաշեն՝ 3545, Մարգահովիտ՝ 3363 մարդ:

Բացի վերը նշվածներից, կենտրոնաձիգ գործառույթներ իրականացնելու զգալի ներուժ ունեն նաև հետևյալ գյուղերը. Սպիտակի տարածաշրջանում՝ Շիրակամուտ, Թումանյանի տարածաշրջանում՝ Դսեղ: Այդ նպատակով անհրաժեշտ է խթանել գործարարությունը և վերականգնել հատկապես տեքստիլ ուղղվածության փոքր արտադրական ձեռնարկությունները:

Կոտայքի մարզ: Այս մարզն Արմավիրի և Արարատի մարզերից հետո բնակչության թվով երրորդն է, իսկ ուրբանիզացման մակարդակով (54,5%)՝ չորրորդը՝ զի-

[9] https://www.armstat.am/file/article/marzer_2020_30.pdf
[10] http://vanadzor.am/vanadzor/uploads/2020/08/LEDP_Vanadzor.pdf

ջելով միայն Սյունիքին, Լոռուն և Շիրակին: Թերևս, մոտ գտնվելով մայրաքաղաքին, լինելով միակ ոչ սահմանամերձ մարզը և ունենալով յոթ քաղաք, այստեղ գյուղական բնակավայրերի բնակչության արտահոսքը մեծ չէ, իսկ զբաղվածության մակարդակը՝ համեմատաբար բարձր:

Կենտրոնաձիգ գործառույթներով առանձնանում են հատկապես Հրազդան, Աբովյան և Չարենցավան քաղաքները: Հրազդանը մարզի կենտրոնն է, որի բնակչությունը 2020 թ. տվյալներով 40011 մարդ է: Քաղաքը նախկինում համարվել է խոշոր արդյունաբերական կենտրոն: Ներկայում այստեղ գործում են «ՀրազՋԷԿ», «Հրազդան ցեմենտ» գործարանները և նախկինում «Հրազդանմեքենա» գործարանի արտադրական տարածքներում՝ մասնավոր, պետական կազմակերպություններ: Հրազդանը համարվում է հանրապետության 4-րդ քաղաքը: Այն ունի պետական քոլեջ, հումանիտար ինստիտուտ, բժշկական ուսումնարան: Քաղաքով են անցնում դեպի Ծաղկաձոր և Հանքավանի հանգստյան գոտիներ տանող ճանապարհները[11]:

Բնակչության թվով մարզի ամենամեծ քաղաքն Աբովյանն է (44931 մարդ), որը նախկինում հանրապետության խոշոր արդյունաբերական կենտրոնն էր: Ներկայում այստեղ գործում են սննդամթերքի, խմիչքների, դեղերի և դեղագործական ապրանքների, ինչպես նաև օրգանական պարարտանյութերի արտադրության, հանքարդյունաբերական տեխնիկայի ներմուծման, շինարարական կազմակերպություններ: Քաղաքում է գտնվում Տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային կենտրոնը: Գործում են պետական ճարտարագիտական, պետական էներգետիկական քոլեջները, Լ. Օրբելու անվան համալսարանը և բժշկական ուսումնարանը[12]: Շնորհիվ զարգացած տրանսպորտային ցանցի՝ շրջակա բնակավայրերից, անգամ՝ Երևանից մեծ թվով մարդիկ աշխատում և սովորում են Աբովյանում, ինչը կենտրոնաձիգ հատկանիշների ակնհայտ դրսևորում է: Այս տեսանկյունից, որոշակի դերակատարություն ունեն նաև Չարենցավան, Եղվարդ, Նոր Հաճն և Ծաղկաձոր քաղաքները:

Միաժամանակ, մարզի հինգ խոշոր գյուղեր՝ Զովունին (6251), Պռոշյանը (5527), Քասախը (5782), Ջրվեժը (6130) և Առինջը (6189), ուղղակի ինտեգրված են Երևանին և ոչ միայն օգտվում են մայրաքաղաքի տնտեսական ու սոցիալական ենթակառուցվածքներից, այլև որոշակի ծառայություններ մատուցում (ժամանցի և հանգստի օբյեկտներ, ավտովերանորոգման և այլ ծառայություններ):

Առանձնահատուկ քննարկման է արժանի հիրավի կենտրոնաձիգ առանձնահատկություններով աչքի ընկնող Նոր Գեղին (6530 բնակիչ): Այս բարեկեցիկ և բարեկարգ բնակավայրը Երևանից ընդամենը 30 կմ հեռավորության վրա է, Նոր Հաճն և Չարենցավան քաղաքները կապող խճուղու վրա, ունի գյուղատնտեսական հումքի վերամշակման, առողջապահական, կրթական, մշակութային և արտադրական կազմակերպություններ, որոնք ոչ միայն զբաղվածության, այլև բնակչության սոցիալ-մշակութային նկարագրի առումով, էական նշանակություն ունեն:

Իրենց կենտրոնաձիգ բնույթով առանձնահատուկ են Ձորաղբյուրը, Գառնին, Աղվերանը և Հանքավանը, որոնք նպաստում են նաև հարևան գյուղերի տնտեսական ակտիվությանը:

Շիրակի մարզ: Մարզկենտրոն Գյումրին ՀՀ երկրորդ խոշոր քաղաքն է, որի բնակչությունը 2020 թ. տվյալներով 112412 մարդ է[13]: Մյուս երկու քաղաքներն են Արթիկն ու Մարալիկը, համապատասխանաբար՝ 17750 և 5408 բնակչությամբ: Մարզի ուրբանիզացման մակարդակը բավական բարձր է՝ 58,6%: Իհարկե, մինչև 1988 թ. Սպիտակի երկրաշարժը Լենինական քաղաքը՝ ներկայիս Գյումրին, ուներ 230,6 հազ. բնակիչ, արդյունաբերական և մշակութային զարգացած կենտրոն էր, որի ավանդույթներն աստիճանաբար վերականգնվում են[14]: Քաղաքում գործում է 3 բարձրագույն ուսումնական հաստատություններ, որտեղ սովորում են ինչպես Շիրակի մարզի, այնպես էլ Լոռու մարզի Սպիտակի տարածաշրջանի և Վրաստանի Ջա-

[11] http://www.mtad.am/files/docs/1776.pdf
[12] Նույն տեղում:
[13] https://www.armstat.am/file/article/marzer_2020_32.pdf

վախքի շրջանի երիտասարդները: Գյումրու՝ որպես «տնտեսական բևեռի» և կենտրոնաձիգ բնակավայրի դերակատարությանը նպաստում է նաև այն հանգամանքը, որ այն ճանապարհատրանսպորտային խոշոր հանգույց է, որը կապ է ապահովում թե՛ տեղական համայնքների և թե՛ արտասահմանի հետ: Գյումրիով են անցնում դեպի Վրաստան միջպետական ճանապարհն ու երկաթուղին: Արտաքին սահմանը բացվելու դեպքում կվերականգնվի նաև դեպի Թուրքիա երկաթգծի և ավտոճանապարհի գործունեությունը: Դրա հետ մեկտեղ, գնալով մեծանում են Գյումրու միջազգային օդանավակայանի հնարավորությունները:

Քաղաքի տնտեսության հիմնական բնութագրիչ ճյուղերն են արդյունաբերությունը, առևտուրը, մշակույթը, տեղեկատվական տեխնոլոգիաները և զբոսաշրջությունը: Այստեղ գործում են 4 խոշոր, 7 միջին, 229 փոքր և 1916 միկրոընկերություններ[15]: ՀՀ կառավարությունը մշակել և 2008 թ. հավանության է արժանացրել Գյումրին տեխնոքաղաքի վերակառուցելու հայեցակարգը: Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամը, ՀՀ կառավարությունն ու Համաշխարհային բանկը հիմնադրել են Գյումրու տեխնոլոգիական կենտրոնը, որն ամենամեծն է տարածաշրջանում: Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում Գյումրու տեխնոպարկի տարածքում գործունեություն են ծավալում 25-ից ավելի միջազգային և տեղական կազմակերպություններ: Գյումրիում է գործում նաև «Թումո» կենտրոնի մասնաճյուղը, որտեղ սովորողների թիվն անցնում է 2000-ից:

2021 թ. սեպտեմբերի 18-ին նշվեց քաղաքի օրը և տեղի ունեցավ «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի մասնաշենքի պաշտոնական բացումը: 10-ամյա հոբելյանը նշող Թումոն հետայսու պատանիներին կհյուրընկալի առաջին թատրոնի պատմական շենքում, որտեղ անցած դարասկզբին առաջին անգամ բեմադրվել է «Անուշ» օպերան: Նախատեսվում է սովորողների թիվը հասցնել 4000-ի[16]:

Քաղաքում արագ տեմպերով զարգանում է զբոսաշրջությունը, որի վառ վկայությունն է զբոսաշրջիկների քանակի և համապատասխան ծառայություններ մատուցող կազմակերպությունների աճը: Այստեղ կան 13 հյուրանոց (շուրջ 700 տեղ), 14 հատ B&B (ավելի քան 140 տեղ), մի քանի հյուրատուն և 3 հոսթել: 2 խոշոր հյուրանոցները, հյուրատներն ու հոսթելները բացվել են վերջին 1-2 տարվա ընթացքում: Զբոսաշրջության զարգացմանը նպաստում է Գյումրու պատմամշակութային կենտրոնը՝ բաց երկնքի տակ գտնվող «Կումայրի արգելոց թանգարանը», որտեղ առկա են 1100-ից ավելի պատմամշակութային հուշարձաններ, մեծ մասը՝ XIX դարի[17]: Զբոսաշրջության զարգացումը խթանում է ոչ միայն քաղաքի, այլև շրջակա գյուղերի բնակչության զբաղվածության ու եկամուտների ավելացմանը: Մեծ պահանջարկ են վայելում նաև Գյումրի – Անի, Գյումրի-Վահրամաբերդ, Գյումրի – Հառիճավանք, Գյումրի – Սուրբ Հովհաննես մատուռ և այլ զբոսաշրջային երթուղիները:

Գյումրին մարզի բնակչության համար ֆինանսական ծառայությունների կենտրոն է, որտեղ գործունեություն են ծավալում Հայաստանում գործող 12 բանկերի մասնաճյուղեր ու 6 ունիվերսալ վարկային կազմակերպություններ:

Գյումրիում են գտնվում մեծ հեղինակություն վայելող՝ Աճեմյանի անվան դրամատիկական թատրոնը, Հայաստանում առաջին տիկնիկային թատրոնը, գործում են 5 թանգարան, 5 գրադարան, արվեստի, պարարվեստի, գեղարվեստի դպրոցներ, 5 երաժշտական դպրոց և 2 պատկերասրահ:

Արտադրական, գիտամշակութային և ֆինանսական ենթակառուցվածքների առկայությունն արդեն իսկ վկայում է Գյումրու՝ որպես Շիրակի մարզի բնակավայրերի համար դասական կենտրոնաձիգ քաղաք լինելու մասին:

Մարզի բնակչության խտությունը մեծ է հատկապես կենտրոնական հատվածում՝ Ախուրյանի, Արթիկի, մասամբ նաև Անիի

[14] Народное хозяйство Армянской ССР в 1988 году: Статистический ежегодник; Ер., «Айастан», 1989, стр. 12.
[15] Գյումրի: Տեղական տնտեսական զարգացման պլան, էջ 9:
[16] https://www.azatutyun.am/a/31466823.html
[17] Գյումրի: Տեղական տնտեսական զարգացման պլան, էջ 10:

տարածաշրջաններում: Այստեղ են գտնվում համեմատաբար խոշոր՝ Ախուրյան (9208 մարդ), Ազատան (5908 մարդ), Սառնաղբյուր (3510 մարդ), Պեմզաշեն (3351 մարդ), Փանիկ (3184 մարդ) և Փոքր Մանթաշ (3018 մարդ)[18] գյուղերը:

Բնակչության թիվը փոքր է և համեմատաբար նոսր բնակեցված Ամասիայի և Աշոցքի տարածաշրջաններում: Այստեղ կենտրոնաձիգ որոշակի ներուժ ունեն նախկին շրջկենտրոնները, իսկ մյուս գյուղերի վիճակը բարվոք չէ: Ընդհանուր առմամբ, մարզի բնակչության գլխավոր հիմնախնդիրը զբաղվածության ցածր մակարդակն է, իսկ դրա անմիջական հետևանքը՝ աղքատությունը:

Մարզի երեք քաղաքների հետ միասին, շնորհիվ բավական հեղինակավոր առողջապահական հաստատությունների, կենտրոնաձիգ հատկանիշներ են ձեռք բերել Ախուրյանը և Աշոցքը: Մասնավորապես՝ Ախուրյանի հիվանդանոցի և ՀՕՄ-ի մոր և մանկան առողջության կենտրոնի ծառայություններից օգտվում է ոչ միայն շրջակա բնակավայրերի, այլև հարևան Վրաստանի (Ջավախքի) բնակչությունը[19]: Ախուրյանի արտադրական և շինարարական կազմակերպությունները, երաժշտական ու մարզական դպրոցները զբաղվածություն են ապահովում և ծառայություններ մատուցում նաև հարևան գյուղերին:

Առողջապահական հեղինակավոր կազմակերպություն է Աշոցքի «Տիրամայր Նարեկ» հիվանդանոցը, որը տարեկան սպասարկում է 3000 ստացիոնար և 30000 ամբուլատոր հիվանդների, անցկացնում 1500 վիրահատություն[20]: Հատկանշական է, որ դեռևս ՀՀ կառավարության 2001 թվականի դեկտեմբերի 24-ի N1237 որոշմամբ այս հիվանդանոցին է հանձնվել 22 գյուղի ամբուլատորիաների գույք, և դրանց պահպանման ծախսերը հոգում են Հռոմի պապի հովանավորությամբ գործող բարեգործական հաստատություններն ու իտալական «Կարիտաս» բարեգործական կազմակերպությունը[21]:

Շնորհիվ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Հառիճի «Թրբանճյան ընծայարան» ավագ դպրոցի բացման՝ վերջին տարիներին նկատելիորեն ակտիվացել է Հառիճ գյուղի հոգևոր ու տնտեսական կյանքը: Բացի այդ, գյուղը դարձել է ներքին զբոսաշրջության կարևոր հանգրվան, և տարեցտարի ավելանում է այցելուների թիվը:

Սյունիքի մարզ: Բնակչության տարաբնակեցման ակնհայտ առանձնահատկություններ ունի Սյունիքի մարզը: 2020 թվականի տվյալներով՝ ընդամենը 137,3 հազ. բնակչությունից 93,2 հազ.-ը բնակվում է քաղաքներում: Այսինքն՝ ուրբանիզացումը մոտ 68% է, որը ՀՀ-ի համար բավական բարձր ցուցանիշ է: Ի տարբերություն Շիրակի և Լոռու մարզերի, այստեղ խոշոր քաղաք չկա, բայց առկա են 7 քաղաքային բնակավայրեր: Դրանցից Գորիսը, Սիսիանը, Կապանը և Մեղրին նախկին շրջկենտրոններ են՝ կրթական և մշակութային բավական զարգացած ենթակառուցվածքներով:

Կապան քաղաքի (2020 թ. տարեսկզբին՝ 42.3 հազ. մարդ) տնտեսության առաջատար ճյուղը հանքարդյունաբերությունն է: Մասնակիորեն զարգացած է նաև մշակող (սննդամթերքի, մանածագործական, ոչ մետաղական, հանքային, փայտե արտադրատեսակներ, ալյումինե և մետաղապլաստիկ իրեր, բնափայտի մշակում) և էլեկտրաէներգիայի արտադրությունը:

Ներկայում Կապան համայնքին է միավորվել 37 բնակավայր, և, ըստ էության, իր աշխարհագրական տեսքով վերականգնվել է նախկին Ղափանի շրջանը[22]: Պետք է ենթադրել, որ միավորված համայնքների բյուջեի և պետական աջակցության ծրագրերի միջոցով առավել արդարացի և արդյունավետ լուծում կտրվի բոլոր բնակավայրերի կենսական նշանակության խնդիրներին:

Քաջարանը (2020 թ. տարեսկզբին՝ 6.9 հազ. մարդ) ՀՀ գունավոր մետալուրգիայի կենտրոնն է՝ շնորհիվ պղնձի և մոլիբդենի հզոր հումքային բազա հանդիսացող հազ-

[18] https://www.armstat.am/file/article/marzer_2020_32.pdf
[19] http://www.arsakhourian.am/arm/about.htm
[20] http://shirak.mtad.am/news/item/2017/07/14/tom/
[21] http://www.irtek.am/views/act.aspx?aid=15360
[22] «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ, http://parliament.am/reading1_docs8/K-017_R1.pdf

վագյուտ հանքավայրի շահագործման: Քաղաքի տնտեսության մեջ իր բաժինն ունի նաև մշակող արդյունաբերությունը՝ սննդամթերքի և պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրությամբ: Քաջարանի կարևոր կենտրոնաձիգ գործառույթը քաղաքի, ինչպես նաև շրջակա մի շարք գյուղերի բնակիչների համար բավական բարձր վճարվող աշխատանքով ապահովումն է:

Գորիս քաղաքի (2020 թ. տարեսկզբին՝ 20.4 հազ. մարդ) տնտեսության հիմնական ճյուղն արդյունաբերությունն է: Հիմնականում զարգացած է էլեկտրաէներգիայի, սննդամթերքի, մանածագործական, կարի, ալյումինե և մետաղապլաստիկ իրերի, բնափայտի մշակման ու փայտե արտադրատեսակների և էլեկտրասարքավորանքի արտադրությունը[23]: Գորիս-Տաթև-Շինուհայր-Խնձորեսկ հանգույցը մեծ պահանջարկ վայելող զբոսաշրջային քլաստեր է:

Գորիսում գործում են մի շարք փակ բաժնետիրական ընկերություններ («Միկրոշարժիչ գործարան» ՓԲԸ, «Տրիկոտաժի ֆաբրիկա» ՓԲԸ, «Զանգեզուր կոմբինատ» ՓԲԸ, «Որոտանի ՀԷԿ» ՓԲԸ, «Գամմա» գործարանը, «Սննդի կոմբինատ» ՓԲԸ, «Հացի գործարան» ՓԲԸ և այլն): Քաղաքն ունի 6 միջնակարգ, 1 հատուկ գիշերոթիկ, 1 երաժշտական, 1 նկարչական, 1 մարզական դպրոց, 7 մսուր – մանկապարտեզ, գյուղատնտեսական քոլեջ, պետական համալսարան, 2 առողջապահական հաստատություններ (հիվանդանոց), 2 պոլիկլինիկա, 2 մշակույթի պալատ, 1 ակումբ, 3 գրադարան, պետական թատրոն, 2 թանգարան (Ակսել Բակունցի տուն–թանգարան և Զանգեզուրի հայրենագիտական թանգարան), ինչպես նաև Գեղագիտական դաստիարակության հանրապետական կենտրոնի մասնաճյուղ, պատկերասրահ, մարզադաշտ, հյուրանոցներ և հյուրատներ, տպարան: Այս արտադրական, կրթական և սոցիալ-մշակութային ենթակառուցվածքների թվարկումը վկայում է, որ Գորիսը տարածաշրջանային կենտրոնաձիգ գործառույթներ իրականացնող կարևոր կենտրոն է:

Սիսիան քաղաքի (2020 թ. տարեսկզբին՝ 14.8 հազ. մարդ) տնտեսության ծավալում գերակշռողն էլեկտրաէներգիայի արտադրությունն է, որոշակի տեսակարար կշիռ ունի նաև այլ՝ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների և սննդամթերքի արտադրությունը:

Մեղրի քաղաքի (2020 թ. տարեսկզբին՝ 4.5 հազ. մարդ) տնտեսությունում գերակա դերը պատկանում է մշակող արդյունաբերությանը: Որոշակի տեսակարար կշիռ ունի նաև էլեկտրաէներգիայի և մրգերի պահածոների ու հյութերի արտադրությունը:

Սիսիանը, տարածաշրջանային առումով, կարևոր զբոսաշրջային, կրթական և մշակութային կենտրոն է: Վերջերս ՀՀ-ում Ճապոնիայի դեսպանատան և Հայաստանի ազգային ագրարային համալսարանի համատեղ ջանքերով այստեղ իրականացվում է գյուղատնտեսական մեքենասարքավորումների ուսուցման և վերապատրաստման կենտրոնի ստեղծման դրամաշնորհային ծրագիր: Կենտրոնը կհիմնադրվի ՀԱԱՀ Սիսիանի մասնաճյուղում՝ շահառու համայնքներին ապահովելով բարձր որակավորմամբ երիտասարդ մասնագետներով:

Ագարակ քաղաքի (2020 թ. տարեսկզբին՝ 4.1 հազ. մարդ) տնտեսության առաջատար ոլորտը հանքարդյունաբերությունն է, մասնավորապես՝ գունավոր մետաղների արդյունահանումը: Այստեղ է գտնվում Հայաստան-Իրան սահմանային մաքսակետը, որի հարևանությամբ հիմնվել է ազատ տնտեսական գոտի[24]:

Այս բնակավայրերը, բացառությամբ Դաստակերտի, աճի կենտրոններ են և լուրջ կենտրոնաձիգ գործառույթ են իրականացնում: Նույնպիսի հնարավոր ներուժով առանձնանում են նաև Գորիսի տարածաշրջանի Շինուհայր, Տեղ, Խնձորեսկ, Վերիշեն՝ 2000-ից ավելի բնակչություն ունեցող գյուղերը, ինչպես նաև ավանդաբար զբոսաշրջության կենտրոն համարվող Քարահունջը և Տաթևը:

Վայոց ձորի մարզ: Բնակչության թվով (48,5 հազ. մարդ) և միջին խտությամբ (22 մարդ/քկմ) Հայաստանի Հանրապետու-

[23] https://www.armstat.am/file/article/marzer_2020_33.pdf
[24] https://armstat.am/file/Map/MARZ_09.pdf

թյան ամենափոքր մարզերից է, որտեղ ցածր է նաև ուրբանիզացման մակարդակը:

Մարզի երեք փոքր քաղաքներում՝ Եղեգնաձոր (7358 մարդ), Վայք (5592 մարդ) և Ջերմուկ (4136 մարդ), միասին վերցրած, 2020 թ. տվյալներով՝ բնակչության թիվը 17086 մարդ է կամ մարզի բնակչության 35,2%-ը:

Վայոց ձորի ներկայիս արդյունաբերությունը ներկայացնում են պանրի, գորգերի, սարքաշինական և շինանյութերի արտադրության փոքր ձեռնարկությունները, որոնք գտնվում են Եղեգնաձորում և Վայքում, ինչպես նաև խաղողի գինու արտադրությունը (Գետափ, Արենի) և Ջերմուկի հանքային ջրերի գործարանը[25]:

Եղեգնաձորի տնտեսության մեջ գերակշռում է վերամշակող արդյունաբերությունը, իսկ Վայքում՝ հանքային ջրերի, շինանյութերի, գինու և ձեռագործ գորգերի արտադրությունը: Ջերմուկը լայն ճանաչում ունի որպես առողջարանային քաղաք: Վերջինիս անվանումը կապված է հանքային տաք աղբյուրների՝ ջերմուկների հետ: Տնտեսության առաջատար ճյուղը հանքային ջրի արտադրությունն է[26]:

Նշված երեք քաղաքներից բացի, կենտրոնաձիգ հատկանիշներ ունեն Մալիշկա, Արենի և Գետափ գյուղերը:

Տավուշի մարզ: 2020 թ. տվյալներով՝ բնակչությունը 121.5 հազ. մարդ է, որից 70.1 հազ.-ը կամ ընդհանուր բնակչության 57.7%-ն ապրում է գյուղերում: Մարզն ունի 5 քաղաքային բնակավայրեր՝ Իջևան (20293 մարդ), Դիլիջան (17295 մարդ), Բերդ (7478 մարդ), Նոյեմբերյան (4514 մարդ), Այրում (1815 մարդ)[27]:

Մարզկենտրոն Իջևան քաղաքը մարզի հյուսիսարևելյան հատվածի վարչական, արդյունաբերական, կրթամշակութային կենտրոնն է և տրանսպորտային հանգույցը: Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակողն է (մասնավորապես՝ սննդամթերքի և գինու արտադրությունը): Իջևանը, շնորհիվ Երևանի պետական համալսարանի մասնաճյուղի գործունեության, մարզի երիտասարդներին ընձեռում է բարձրագույն կրթություն ստանալու հնարավորություն: Քաղաքից ոչ հեռու գտնվող արկածային զբոսաշրջության հանգրվանը՝ Ենոքավանը, դարձել է զբոսաշրջիկների սիրելի վայրերից մեկը:

Դիլիջանը հայտնի է իր առողջարաններով և հանգստյան տներով: Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը սննդամթերքի և խմիչքների արտադրությունն է: Լայն ճանաչում ունեն «Դիլիջան», «Դիլիջան Ֆրոլովա» հանքային ջուրերն ու Դիլիջանի գարեջուրը: 2014 թ. սեպտեմբերից ի վեր այստեղ գործում է «Դիլիջան ինտերնեյշնլ սքուլ օֆ Արմենիա» միջազգային դպրոցը, իսկ 2013 թ. սեպտեմբերից՝ «Այբ» դպրոցների ընտանիքին պատկանող՝ Դիլիջանի կենտրոնական դպրոցը: Քաղաքի ճարտարապետական տեսքին առանձնակի վայելչություն է հաղորդում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ստորաբաժանումն իր օժանդակ կառույցներով[28]:

Նոյեմբերյան և Բերդ քաղաքներն առավելապես աչքի են ընկնում գյուղատնտեսությամբ և շինանյութերի արտադրությամբ: Այրումը կայարանամերձ քաղաք է, և բնակչության հիմնական զբաղմունքը մանրածախ առևտուրն է: Բերդ քաղաքի տնտեսական զարգացման գործում մեծ նշանակություն ունի վերջերս զարգացող տեքստիլ արտադրությունը, որը լուծում է նաև սահմանապահ բնակավայրերի բնակչության զբաղվածության և արտահոսքի կանխման խնդիրները:

Մարզի 62 գյուղից բնակչության թվով հատկապես աչքի են ընկնում Աչաջուրը (4152 մարդ), Կողբը (4580 մարդ), Հաղարծինը (3527 մարդ), Գանձաքարը (3481 մարդ), Այգեհովիտը (3198 մարդ), Բերդավանը (3224 մարդ), որոնք ունեն զարգացած կրթամշակութային ենթակառուցվածքներ և նույնպես իրականացնում են կենտրոնաձիգ գործառույթ:

Եզրակացություններ

1. Տարածքային համաչափ զարգացման բնութագրման տեսանկյունից, առավել պատկերավոր կարող է լինել «կենտրո-

[25] https://www.armstat.am/file/article/marzer_2020_34_.pdf
[26] Նույն տեղում:
[27] Նույն տեղում:
[28] Նույն տեղում:

նաձիգ բնակավայր», քան «աճի բևեռներ» եզրույթի կիրառումը, քանի որ վերջինս շեշտադրում է հատկապես տնտեսական ներուժը: Մինչդեռ «կենտրոնաձիգ բնակավայրերին» բնորոշ է սոցիալ-տնտեսական, հատկապես, զբաղվածության և մշակութային առումով, շրջակա բնակչությանը ծառայությունների մատուցումը, որը առավել կառավարելի է դարձնում զբաղվածության, գյուղական բնակչության արտահոսքի և սոցիալ-մշակութային ոլորտներում համաչափ զարգացման հիմնախնդիրների լուծումը:

2. Հոդվածում շեշտադրվում են կենտրոնաձիգ ներուժ ունեցող բնակավայրերն ըստ մարզերի՝ այդպիսով ակնկալելով, որ, տարածքային զարգացման շահերից ելնելով, «պետություն-մասնավոր հատված» համագործակցության արդյունքում առանձնահատուկ ուշադրության կարժանա դրանց առաջխաղացման գործընթացը, ինչն էլ կապահովի բազմարկչային արդյունավետություն:
3. Տարածքային զարգացումը խթանելու առումով, կարևոր է «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի ընդունումը, որը հիմնականում ուղղորդված է դեպի համայնքների շրջանային և փնջային սկզբունքով խոշորացումը: Այս դեպքում նույնպես շեշտադրվում են նախկին շրջկենտրոնների և խոշոր բնակավայրերի կենտրոնաձիգ դերն ու գործառույթները[29]:
4. 2021 թ. դեկտեմբերի 25-ին նախատեսվում է անցկացնել տեղական ինքնակառավարման մարմինների համամասնական ընտրակարգով ընտրություն, որից հետո համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները կհամարվեն դադարած. այդ նույն օրը միավորված համայնքների տեղական ինքնակառավարման մարմինները կստանձնեն իրենց լիազորությունները[30]: Ենթադրվում է՝ այս համակարգի ներդրումը բյուջետային միջոցների կենտրոնացմամբ կարող է նպաստել տարածաշրջանային խնդիրների համատեղ լուծմանը:

[29] «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ, http://parliament.am/reading1_docs8/K-017_R1.pdf

[30] «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ, http://parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=12703&Reading=1

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ավետիսյան Ս., Գրիգորյան Վ., Հայաստանի Հանրապետության բնակավայրերի տեղեկատու, Եր., «Մեկնարկ», 2018, 1060 էջ:
2. Պոտոսյան Ա., Հայաստանի Հանրապետության գյուղական բնակչությունը և բնակավայրերը, ԵՊՀ, Եր., «Աստղիկ» գրատուն, 2013,416 էջ:
3. Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի բյուջետային ուղերձ, Եր., 2017:
4. «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ, http://parliament.am/reading1_docs8/K-017_R1.pdf
5. Գյումրի: Տեղական տնտեսական զարգացման պլան, Գյումրի, 2018:
6. Народное хозяйство Армянской ССР в 1988 году: Статистический ежегодник. Ер., «Айастан», 1989, 272 с.
7. https://anyroad.ru/country/il
8. https://knoema.ru/atlas/%D0%AF%D0%BF
9. Հայեցակարգ տարածքային աճի բևեռների զարգացման, http://www.irtek.am/views/act.aspx?aid=93189
10. «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենք, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=118597
11. https://www.armstat.am/file/article/marzer_2020_30.pdf
12. https://www.armstat.am/file/article/marzer_2020_32.pdf
13. http://www.arsakhourian.am/arm/about.htm
14. http://shirak.mtad.am/news/item/2017/07/14/tom/
15. http://www.irtek.am/views/act.aspx?aid=15360
16. https://www.armstat.am/file/article/marzer_2020_34_.pdf
17. https://www.armstat.am/file/article/marzer_2020_35_.pdf

Самвел АВЕТИСЯН
Старший эксперт исследовательского центра «Амберд», АГЭУ,
доктор экономических наук, профессор

ТЕРРИТОРИАЛЬНОЕ РАЗВИТИЕ

ЦЕНТРОСТРЕМИТЕЛЬНЫЕ НАСЕЛЕННЫЕ ПУНКТЫ КАК ВАЖНЫЙ ФАКТОР ТЕРРИТОРИАЛЬНОГО РАЗВИТИЯ

Пропорциональное территориальное развитие - процесс многофакторный и сложный. Претендовать на абсолютную симметрию здесь совершенно нереалистично, потому что географические, природные, экономические, социальные и даже человеческие факторы несколько отличаются и тем самым влияют на суть процесса развития.

Влияние упомянутых факторов становится более очевидным в такой горной стране, как Армения. Кстати, небольшие размеры страны не смягчают влияние этих факторов, ведь даже в соседних населенных пунктах иногда заметны различия в обычаях, цивилизации, образе жизни, акцентах и лексике. А совокупность перечисленных характеристик создает определенный колорит, который придает особое содержание занятиям, работе и жизни людей.

Однако нетрудно заметить, что сравнительно благополучный и благоустроенный, технический оснащенный современными производственными предприятиями, объектами культурного и социального назначения город, а в некоторых случаях и крупное сельское поселение, существенно меняет облик региона, способствует его развитию. Поселения с таким потенциалом обычно упоминаются в профессиональной литературе как «полюс роста». Однако «полюсам роста» более характерно развитие экономического потенциала. С точки зрения сбалансированного территориального развития более характерный термин «центростремительные поселения», поскольку функционально для этого типа поселений весьма важно не только экономические, но и социальные инфраструктуры.

Ключевые слова: *территориальное развитие, центростремительные поселения, «полюс роста», урбанизация, население, занятость, инфраструктура*

Samvel AVETISYAN
Senior Expert at «Amberd» Research Center, ASUE,
Doctor of Sciences (Economics), Professor

TERRITORIAL DEVELOPMENT

CENTRIPETAL SETTLEMENTS AS AN IMPORTANT FACTOR OF TERRITORIAL DEVELOPMENT

Proportional territorial development is a multifactorial and complex process. It is generally unrealistic to claim absolute symmetry here, because geographical, natural, economic, social and even human factors are somewhat different and, thus, affect the essence of the development process.

The influence of these factors becomes more evident in a mountainous country like Armenia. By the way, the small size of the country does not mitigate the influence of these factors, because even in neighboring settlements, differences in customs, civilization, lifestyle, dialects and vocabulary are sometimes noticeable. And the totality of the listed characteristics creates a certain flavor, which gives a special content to the occupations, work and life of people.

However, it is easy to notice that the presence of relatively prosperous and well maintained cities, technically equipped with modern production enterprises, cultural and social facilities, and in some cases a large rural settlement, significantly changes the appearance of the region and contributes to its development. Villages with this potential are commonly referred to in professional literature as a “burden of growth”. However, the development of economic potential is more characteristic of the “growth poles”. From the point of view of proportional territorial development, the term “centripetal settlements” is more characteristic, since functionally for this type of settlements, not only economic, but also social infrastructures are very important.

Keywords: *territorial development, centripetal settlements, "pole of growth", urbanization, population, employment, infrastructure*